

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելառուսի Հանրապետության Մշակույթի նախարար Վլադիմիր Մատվեյչուկին՝ ՀՀ Մշակույթի փոխնախարար Գագիկ Գյուրջյանի և ՀՀ-ում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարինա Դոլգոպոլովայի ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը ողջունեց երկու երկրների Մշակույթի նախարարությունների միջև ստորագրված համագործակցության ծրագիրը և արդյունավետ ընթացք մաղթեց ծրագրի իրականացմանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջև առկա բարեկամական ջերմ հարաբերություններին և դրանց զարգացման գործում կարևորեց նաև միջմշակութային շփումներն ու կապերը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Բելառուսի հայ համայնքի կյանքին, ինչպես և խոսվեց Բելառուսի կրոնական խճանկարի մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ